

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկակն	12 ֆր.
վնցումսայ	7 "
Արսասահմանի	
համար սարեկակն	15 ֆր.
վնցումսայ	8 "
Աւերիկայի համար	
սարեկակն	3 սյ.
վնցումսայ	1.50 "

Մանուգրան տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. հրեհին աւերիկան վնգումսայ համար 20 0/0 գեղջ կրչայ:

Վարձայի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՎՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նամակ եւ դրամ որ կեղ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

«ԱԶՍԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ»

Եստ հեռու ու մոտոցած չէ այն օրը երբ Բարիզի ամբոխն ալ, ցաւով, անօթու թիւնով ու վրէժով գինովցած, մոլորած ու խելայեղ նետուեցաւ արքայական շուայտ ապարաններուն վրայ, ուր շուներն ու այլ նուաստ կարգի անասունները աւելի փառաւոր կեանք կը վարէին քան երկրի հարազատ զաւակները. որոնք կոռւած, մաքառած, ճգնած էին անոր բարգաւաճման համար ու զոչեց այս միեւնոյն խօսքերը, որն այսօր կը հնչուի Ռուսաստանի մէջ ծայրէն միւսը. Ազատութիւն, Հաւատարմութիւն, Եղբայրութիւն...

Մեր անցեալ յօգուածի արտասուք պաճ հատուածը որ ուրիշի չէր բայց եթէ «Տէյլի Թէյէկրաֆի» քաջածանօթ Տիւրքի խօսքերը, որուն նախագուշակումները եւ ո՛չ մէկ անգամ ալ թերացած են, այս պահուստ անմխտելի իրականութեան են փոխուած:

Մտկոզման աշխարհը հեղ մըն ալ կը ներկայացնէ արեւնի եւ զիակներու. յուզումի եւ իրարանցումի, գործադուլներու եւ յամառ ընդվզումի հսկայ ռազմադաշտ մը. աւելի կատարի ու սպառնական քան երբէք. Վաղմբն իշխան Դրոսթեցիօի ծարին ուղղած անցեալ ապրուայ նամակին խօսքերը իրականութեան խաւի մէջ մտան. «Կայսրութեան այս գէպերը յուզումներ չեն լոկ, այլ յեղափոխութիւն...»

Այս եւ ատոր առաջին նշանը տուին գեռ քանի մը օրեր առաջ Մոսկվայի երկաթուղային գծի բանտներէրէ հոգնակելով ընդհանուր գործադուլ: Սա ստացաւ ընդարձակ ծաւալ. Հետեւեցան գործադուլներ՝ մեքենա, գործներու, տպարանական աշխատաւորներու, մսավաճառներու, հացագործներու, ջուրի եւ կազի աշխատաւորներու, եւ այլն, եւ այլն, այնպէս որ ամբողջ քաղաքը կղզիաձաւ լով հանգերձ գուրսիներէն, ինկուսովի անողորմ սպառնալիքին ներքեւ:

Հակառակ գրաքննական բոլոր խիստ միջոցներուն, հնար չեղաւ արգելիչ այս սրտապնդիչ գոյժին տարածումը եւ ահա՛, Մոսկվայի օրինակին հետեւեցաւ Բեթերսպուրկի, իսկ անկէ ծաւալեցաւ ու երկարեցաւ կայսրութեան զանազան անկիւնները ուր արդէն յաւիտենական բորբոքման մէջ են. «Կարմիր Բոլշեւիստ յուզումը Սեւ ծովեան ափերը, վրէժինքի ծիրանաւոր, եւ, միշտ անհան-

դարտ ու անպահով արեւնոտ կովկաս...

Ժամ առ ժամ եւրոպական մամուլին հապած հեռագրիները հօս զետեղել անկարելի բան է: Բայց ահա թէ ատոնց ամբողջութիւնն ու բովանդակութիւնը ինչ բանի կը յանգին: Գործադուլի արտաքինին ներքեւ, որ այս պահուստ ընդհանրական երեւոյթ մը ունի ամեն ուր որ ծագած է, մասնաւորապէս Մոսկվա. «սրբազան Ռուսաստանի սիրտը, եւ Բեթերսպուրկ, ցարցաբողն սերմանուած յեղափոխութեան սերմերը արգաւանդիլ սկսած են, Գործադուլը ո՛չ միայն առեւտրական կամ կառավարական հիմնարկութեանց մէջ է, այլ եւ բոլոր առաջնակարգ վարժարաններու եւ համալսարաններու մէջ, Բանուր եւ ուսանող կուրծք կրծքի տուած, ամենուրեք կը սարքեն ցոյցեր, միջիններ, կը խօսուին ցրգոնիչ ճառեր եւ կը լուրին կոչեր՝ զինուելու. կատարելապէս զինուելու: Բեթերսպուրկի 50,000 ուսանողներէ եւ բանուորներէ գումարուած ժողովը պարզ ապացոյց մ'է մեր բաժին:

Փողոցային ցոյցերը դարձած են սովորական բաներ: Կարմիր դրոշակներ բարձրացուած, յեղափոխական երգեր գոռաւով՝ ամբոխը իրեն բնայան է ընտարած Մա՛հ կամ Ազատութիւն»...

Իսկան Իրէթով, անցեալ Բեթերսպուրկեան Կարմիր Կիրակիի ախորժակով մոլորեցած, որուն յանձնուած է այս պահուստ նաեւ. ընդհանուր զինուորական քոնթրոլը, անդադար գունդեր բերել կուտայ մայրաքաղաքը, միեւնոյն փոստակ կոչ ընելով ժողովրդին. «Թեքուս իր սարգասեր» զգացումներէն մղուած. «չը հետեւի երբէք «խռովարարներուն», որոնք անօրէն մարդիկ են եւ ո եւ է «առաքինի ու հաւատարիմ քաղաքացի» պէտք է միայն իր արհամարհանքը ուղղէ անոնց:

Սա կոչ մ'է ժողովրդին. Կայ ուրիշ մը գունդերուն համար. Վեցէ աւելի խուճերու վրայ անպայման կրակեցէք: Ու. տանելով իր հրէշաւոր մտքի ծնունդը վայրագութեան զագաթնակտին. կաւելցնէ սա հակամարդկային խօսքերը: «Ու ամեն բանէ աւելի, մի՛ խնայէք երբէք ձեր գնդակներուն»:

Միւս կողմէն, ծարը փակուած Բեթերսպուրկի մէջ ըստ ոմանց, պատրաստութիւններ կը լուրին զինքը գէպի Տանիական ջուրերը անցնելու իր սեփական զբօսանաւով. եթէ հակառակ պարագային գրութիւնը առնէ չափազանց կատաղի երեւոյթ:

Մէկ խօսքով. Լուզովիկոս-Մարի-Անթուանէթեան շրջանի շարագուշակ մղձաւանջը հալածել սկսած է ծարիղմի արքայական ջոլորը. Մահու շուկ մըն է որ սկսած է մոայլօրէն զեզերիլ հոն: Արդեօք իրենց ալ պիտի հասնի այն զարհուրելի ճակատագիրը, որ բաժին ինկաւ Մատամ Վէթօին ամենակալ հովանաւորութիւնը վայելող ազնուապետութեան: Արդեօք ռուսական «ժաքորին» չը պիտի ստանայ աւելի կատաղի ու դժբեմ հետեւեալ մը իրենց հանդէպ. քան ինչ պատահեցաւ Փրանսական հողային կառուածատէրներու...:

Գտնուելով այս բոլոր իրականութեան առաջ եւ տեսնելով ռուս ազնուականութիւնն ալ այս աստիճանի ցնցուած, մինչեւ իսկ տեղ, տեղ, գէպի բօնդիւնէն զանազան մասերը գալթուած ալ ծայր առած, կրնանք առանց վարանումի հաւատալ թէ ռուսական ժողովրդի իմրած հոգին զարթնած է: Գուցէ այս ըմբոստացումը չը սայ ժողովրդին բաղձալի վախճանը, գուցէ զինուորական գունդերը այս անգամ ալ յաջողին յալթական դուրս գալ ժողովրդին վրայ ինչ որ անհաւանական չէ. բայց եւ այնպէս, ատոնք չեն մեռններ ելքէք ռազատագրութեան այդ հզօր ճիգին եղբարդիցազնական պատկերները դիտողներուն օրտապընդիշ յոյսերը. եւ ո՛չ ալ կը սառնցնեն զանոնք առաջնորդող ջերմ հաւատքները...

Սա ամենազժուարին քայլն էր Այդ որ առնուեցաւ. յաջողութիւնը անխուսափելի է, ուշ թէ կանուխ: Ոմանք սկսած են հաւատք ընծայել Վիթթէի ազատամիտ ծրագրիներուն, որ պատրաստած է, եւ որուն համար իր հակառակորդները, միապետութեան եւ ինքնակառութեան անխորտակելի սիւները — զինքը կը յատկանշեն իբրեւ Միրապօ մը, իսկ իր հետեւորդները, ժազօպէնները...

Կոմս Վիթթէ մինչեւ այսօր տակաւին ցոյց տուած չէ, եւ որքան որ ակնեքեւ է, տալիք ալ չունի Միրապօ արժանի արարք մը, սա շատ պարզ պատճառով բողոքող մը ըմբոստ մը, ողբերուած յեղափոխական — ո՛չ նոյն իսկ ազատական. — մը չէ ան: Միրապօ չէր խօսէր երբէք իր օգոստափառ վեհապետ եւ կայսեր» անունով, Վիթթէ հաճօյակատար մըն է, քիչ մը ազատական գաղափարներով ուրիշ ոչինչ, Ատոր պերճ ապացոյցը կարելի է նկատել իրեն օրկան համարուող «Ռուսիան» մէջ.

Ուրեմն, Վիթթէ շատ քիչ գոհա-

ցում կրնայ տալ այն հզօր պահանջին. որ ամեն իրաւունք, ամեն տեսակ արտօնութիւններէ ու ազատութենէ զրկուած հալածական ժողովուրդ մը բարձրագոյ կը գոռայ տիրական յամատութիւնով. Ազատութիւն Հաւատարմութիւն եւ Սահմանադրութիւն...

ՍԼԱՅԻԿ ՆՕԹԵՐ

ՃԱՐՕՆ ԵՒ ԵՒՐՕՊԱ

Դերկոմս Հահաչի, Լօնտօնի ճարտարական միներստրը, իր երկրին քաղաքագիտական տաղանդը փայլեցնող գրքի է ան շքանու գէմբերէն մէկն է Եւրոպայի մէջ: Երկար ատենէ ի վեր իրազօր ներկայացուցիչ Լօնտօն, անոր անմիջական եւ ուղղակի ջանքերով էր որ կնքուեցաւ 1902 յունվար 30ի Անկլո-Ճարտարական դաշինքը, որուն անմխտելի բարիքները վայելիչ ձարուն եւ որ վերանորոգեց զայն 1905 օգոստոս 12ին:

Իր ձայնը միշտ հեղինակաւոր է ու ազդեցիկ: Իր յարգանքը բարձր ու պատուելի: Ու մի այսպիսի անձնաւորութիւն, երբ կը յայտնէ կարօթ մը, ունի մասնաւոր եւ բացառիկ արժէք:

Այս օրերս բարիզեան «Մաթէն» օրաթերթի Լօնտօնի մասնաւոր թրդութակիցը տեսակցութիւն մը ունեցած է պ. Հահաչիի հետ, զնեղով իր առաջ շարք մը հարցեր, մասնաւորապէս այն՝ թէ ինչ գիրք պիտի բռնէ Ճարտարականութեան մասնաւոր հետեւ:

Ահա թէ ինչ յայտնած է դերկոմս Հահաչի այդ խնդրի առթիւ:

«Ճարտարական ժողովուրդը սնուցած չէ երբէք, ոչ առաջ եւ ոչ ալ պատերազմի ընթացքին: ո եւ թշնամական զգացումները հանդէպ ռուս ժողովրդին: Չայրոյթը որ կը տիրէր ձարունի մէջ պատերազմէն անմիջապէս առաջ, յատուցած էր ռուս կառավարութեան, վարմունքէն: Ճարտարական ժողովուրդը, կը կրկնեմ, յաճախ, նոյն պատերազմի միջոցին, արտայայտած է իր համակրանքը հանդէպ ռուս ժողովրդին առանձնապէս: Այսօր այդ համակրանքը նուազած չէ երբէք. իսկ ինչ կը վերաբերի երկու կառավարութեանց, անոնք կը գտնուին այն երկու անձերու դիրքին մէջ, որ կոռւած են հաւատարմաբար եւ որ, իրենց մենամարտէն վերջ, կը սեղսեն իրարու ձեռք աղնուօրէն»:

անցեալը հնար եղածին չափ շուտով մոռնալու մտածումով եւ փոխադարձաբար օգնելու՝ զարգացման համար իրենց ընդհանրական շահերուն, յառաջադասման համար քաղաքակրթութեան եւ յառաջացման համար խաղաղ ու բարգաւաճ շրջանի մը :

«Ընթացն անկեղծ փափաքող է Ռուսաստանի ներկայ խոռվեալ կացութեան շուտով վերջ գտնելուն, տարով միեւնոյն ժամանակ գոհացում ժողովրդին ու իր վեհապետին :

«Չեմ տեսներ թէ ի՞նչու, երկու ժողովրդներն արտայայտելով փոխադարձ լուր տրամադրութիւններ, գերազանց համերաշխութիւն մը հետեւեալ նկատուի երկու կառավարութեանց միջեւ :

«Անյուշտ պիտի հաստատուի երկու երկիրներու միջեւ, մտաւոր ապագային, առեւտրական ու տնտեսական համաձայնութիւններ որ պատերազմը կասեցոց : Ընթացն կառավարութիւնը, իր կողմէն, իր կրցածը պիտի ընէ պահպանելու համար Ռուսաստանի հետ է՛ն բարեկամական յարաբերութիւնները, ու անմիջական ապագան պիտի ապացուցանէ թէ մեր բաղձանքը սերտ համերաշխութեան մը համար սեր Հեռ. Արեւելքի հզօր դրացիին հետ՝ խիստ անկեղծ է :

«Անկլիո—Ճարձական օգոստոս 12ի դաշինքը բացառապէս պաշտպանողական միջոց մըն է եւ ո՛ր եւ է երկրի շահերուն չբացահայտար :

«Նենգութիւն է ըսել, ինչպէս ըսին քոնգրէնզի մէկ երկրի մը մէջ, (մասնաւորապէս Գերմանիա, աւելցնենք մեր կողմէն), թէ այս դաշինքը յարձակողական յատկութիւն մը ունի. առաւել եւս նենգութիւն է յայտարարել, ինչպէս ըրին Եւրոպայի զանազան կողմերը, որ չեմ ուզեր անուանել. (առհասարակ Վիլհելմ—Պոլովի, ոռուս միապետական եւ նոյն աղատական Վիթթեր օրկան

մամուլները) սարքուած է ընդդէմ Ռուսաստանի, որ պիտի յառաջացնէ, իրերու բնական ընթացքով, նորագոյն ընդհարումներ Հեռ. Արեւելքում :

Դաշնագրութեան միակ նպատակը, որ հրատարակուեցաւ իր իսկութեամբ, եւ որ, հետեւեալաբար, չը պարունակեր ո՛ր եւ է գաղտնի յօդուած, ապահովել է խաղաղութիւն. ոչինչ բայց խաղաղութիւն Ասիայում : Դաշնագրութիւնը նոյնքան նպատաւոր է միւս երկիրներու՝ որոնք շահեր ունին, որքան Անգլիոյ եւ Ճարձակի, որոնք կ'ընդունին զայն :

«Կը կարծեմ թէ արեւմտեան երկիրները, մասնաւորապէս Ռուսիա եւ Ամերիկա, պիտի համոզուին թէ Անկլիո—Ճարձական դաշնագրութիւնը, հետեւ ըլլալով հանդերձ զանազան երկիրներու օրինաւոր շահերուն հակասելէ, պիտի միայն օժանդակէ անոնց բարգաւաճման, ինչպէս նաեւ նոյն Ասիոյ, եւ որ պիտի գիտցուի պատմութեան մէջ որպէս տօքիւման մը՝ թելադրուած Հեռ. Արեւելքի մէջ խաղաղութիւնը պահպանելու բաղձանքով :

«Թղթակիցը ապա կը հարցնէ թէ ի՞նչ կը խորհի պ. Հաեաչի Անգլո—Պրանսական վերջին սերտ ու ջերմ համակրական արտայայտութեանց մասին :

«Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ բարեկամութիւնը մեզ համար մեծ արժէք ունի մեր քաղաքականութեան մէջ : Մեր բարեկամներուն բարեկամները մեր բարեկամներն ալ են» : Եւ ապա կ'աւելցնէ :

«Նոյնպէս կը նախատեսեմ բարեկամութիւն մը սերտ ու մնայուն՝ երկու երկիրներու միջեւ, (Ֆրանսա եւ Ճարձակ) նամանաւոր որ «Դեղին պատուհասի» անբացատրելի մղձաւանձը որ ունէին Ֆրանսայի մէջ զանազան անձեր. անհետացած կերեւի, եւ որ կ'սկսին հասկնալ թէ ձա-

րոն նպատակ չունի երբէք յափշտակելու Հնդկա—Չինաստանը, ինչպէս նաև հիւս. բուեռը :

«Պ. Հաեաչի խօսքերը՝ իր երկրի ոռուս ժողովրդի գէժ ունեցած համակրանքի մասին, կասկած չկայ որ ճիշդ ու իրաւացի են, որովհետեւ ատոր ապացոյցը տուին անոնք, ճարձակիք. մէկէ աւելի անգամներ, իրենց վեհանձն ու ազնիւ բնաւորութեամբ :

«Ու Վիլհելմ Պոլովեան մամուլը, որքան ալ ճշիւ ներկայացնել,— ձեռք տուած «Ռուս»ին «Սոլովոյն» եւ ալ նման ոռուս ազատական թերթերուն,— վերջին անգլո—ճարձակական դաշինքը մէկուն կողմէ պարզապէս վարձկանի դեր, իսկ միւսին կողմէ ուրիշին մասնորոգ յազանակներ կրակէն հանելու» նենգութիւն, չը պիտի ուշանայ երբէք Անկլիո—Ռուսական մէկ կողմնակի մերձեցում մը, որուն նախաձեռնութիւնը առած է «Նովոօ—Վրէմիա», եւ որ ֆրանսական է՛ն չօլիմիստ թերթերն իսկ ոռուս կառավարութեան փրկութիւնը կը գտնեն երկրի բարեփոխման, ֆրանսո—ռուսական դաշինքի զօրացման եւ անգլո—ռուսական բարեկամութեան մէջ :

Եւ դա է Վիլհելմի գիշերն ու ցերեկը մղձաւանջներով պաշարողը : Մ. ՏՈՒԱԿ

ՅԱՐԻ ՀՐՈՎԱՐՍԱԿԸ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ —)o(—

«Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին յայտարարում ենք.— Մայրաքաղաքներում մեր կայսրութեան շատ տեղերում տեղի ունեցող խռովութիւնները եւ յուզումները Մեր սիրտը լցնում են

ՍԷՍՐԼԻԱ Մ. ՊԼԵՅԲ 22 ԴԵՓԻ Հայկական Ռուսիան մը (Թարգմանութիւն Անգլիերէնէ) ԳԼ. ԺԳ. «ՄԵՌՆԵԼՈՒՒ ԵՆՔ, ՍԱԿԱՅՆ» Այնուհետեւ հայրս առնելով սեղանին վրային խնամքով կնքուած պահարան մը, ինձ տուաւ : Տխուր ու մտախոհ կերպէր, յիշուի. գէժքը կրկին վերստացեր էր այն նախկին արտայայտութիւնը, որուն այնքան վարժուած էի մանկութեանէս ի վեր—տխուր... տխուր... անբացատրելիօրէն տխուր... —Դէֆիս, ըսաւ, յոյս ունէի իւր նախընտրած այն ցաւը, որ պիտի ըզգայիր ծանօթանալով իմ տասնեւութ տարուան ճակատագրային ու անպատմելի շարժարաններուն, որուն խոցը մինչեւ սիրտս իջած է, որ կեանքին էն պայծառ տարիները ազօտած են : Բայց հիմա, կանգնած ըլլալով անձան օրին, մարդկութեան համար բնական եղող սեմին առջեւ, համակրանքի տենչը թերեւս եսասիրականօրէն, կոտիպէ զիս գազտանքը յայձեմն քեզ, որ, ուրիշ պա-

րազաներու տակ մտադիր էի երբէք չը վշտացնել Դէֆիս սիրտը, այլ փշրուած սրտիս հետ գերեզման տանիլ : Երբ կարդաս, Դէֆիս, շատ բաներ, որ Արամբանի կեանքին մէջ տարօրինակ թուած են, պիտի պարզուին, շատ բաներ, որոնք անազնիւ—նոյն իսկ կոշտ—երեւցած են, իմ քեզ հետ ունեցած վարժուելիս մէջ, պիտի ներուին : Այո, Դէֆիս, պիտի լսաւ Արամբանի վրայ, պիտի գթաս ու ներես իրեն : —Ո՛հ, հայր իմ, նետուեցայ այդ վեհ պատկերին բազուկներուն մէջ— Դէֆիսին մարգարէին, վարդապետին ու արքային—ու արտասուեցի հոն : ԳԼ. ԺԴ. ԿՆԻՒԲԸ ԿԸ ՓՇՐՈՒԻ Թաղորդ օրն էր որ քաղութիւն ունեցայ հօրս տուած պահարանին կը նիքը փշրել : Երկու կողմը խիտ զբոնուած քանի մը թերթեր կը պարունակէր այդ եւ ահա թէ ինչ էր գրուած : «Ռուսո—թրքական պատերազմի փակումէն տարի մը վերջը եւ դաշնագրութիւն ստորագրուելէն յետոյ էր, որ Սուլթանը խոտաացաւ բարենորոգումներ հաստատել իր հալածական հայ հպատակներուն, որպէս զի վաշիւն անոնք ալ այն խաղաղութիւնն

ու ապահովութիւնը, ինչ որ կը վայելէ հիմա ամբողջ քաղաքակրթական մարդկութիւն : Քրիստոնեան աշխարհի կայսրութիւններու մեծագոյնն ու հզօրագոյնը,—երկրագնդին վրայ աւելն մէկ անկիւն գտնուող ազատեալ ներու բարեկամը,— երաշխաւորեց այս դաշինքը, ու մենք, խեղճ հայերս ալ, վերանորոգուած յոյսով բարձրացուցինք զլուսնիս, վստահ ըլլալով որ փրկութիւնը մօտ է. բայց ախտա... աւարտութիւն, բռնաարտում, կոտորած, երկար տարիներէ ի վեր զլուսնիկան դարձեր են մեր ցօրաղջ հայաստանի համար : Հալածանքի դարեր—մի մոռնար երբէք, Դէֆիս, որ հալածանքի երկաթէ դարձապարներուն տակ կը ճնշուէր, որովհետեւ մենք քրիստոսը լաւագոյն սեպեցինք Մուհամմէտէն, իր խաչը՝ սուտ մարգարէի մահիկէն : Դարեր Հայաստանը լքի հայրերուն նուիրուած հաւատքին նահատակ եղաւ : Բայց այս բռնակալութեան դարերը մեր ժողովրդին մէջ անոնց առնական կորովը փճացուցին : Ատեն մը անոնք աշխարհի էն քաղաքի ցեղն էին, հիմա «սեղմօրէն» կը յառաջանան : Հիմա կը սողոսկան, կը քծնին իրենց բռնակալներուն—ստրուկներ են անոնք—բայց լոկ անուով կը թողուն որ անասնաբարոյ բռնակալները տանին իրենց կոյս հարսերուն է՛ն գեղեցիկները, եւ առանց իրենց անտանելի կեանքը վտանգե-

մեծ վշտով : Ռուսիոյ թագաւորի բարօրութիւնը անխղճիօրէն կապված է ժողովրդեան բարօրութեան հետ ու ժողովրդային վիշտը եւ նրա վիշտն է : Ներկայումս յառաջացած յուզումները կարող է յառաջանալ ժողովրդային մեծ կազմալուծում եւ սպառնալիք Մեր պետութեան ամբողջութեան : Մեր թագաւորական ծառայութեան համար տուած մեծ խոստումը հրամայում է մեզ մեր իշխանութեան եւ բանակալութեան բոլոր ուժերովը ձգտել արագաբար վերջ տալ պետութեան համար այսքան վտանգաւոր յուզումներին : Հրամայելով անկ եղած իշխանութիւններին միջոցներ ձեռք առնել հեռացնելու անկարգութեանց, խժդր ժուլեանց եւ բռնութեանց ուղղակի արտայայտումները պաշտպանելու համար խաղաղ մարզոց որոնք ձգտում են իրենց վրա դրված պարտականութիւն հանգստօրէն կատարել, Մենք, մեր նախազգած ընդհանուր միջոցները յաջողութեամբ իրագործելու համար, անհրաժեշտ համարեցինք իմր ձուլել բարձրագոյն վաշտութեան զործունէութիւնը եւ մեր կառավարութիւնը պարտաւորեցնում ենք կատարել մեր անխորտակելի կամքը :

1. Շնորհել բնակչութեան քաղաքացիական ազատութեան անգրգռելի հիմունքները անհատներին, խլիճի, խօսքի, հաւաքումների եւ միութիւնների իրական անձեռնմխելիութեան սկզբունք- լու՝ չեն կրնար հարուած մը իսկ բարձրացնել : Եթէ կայ իրենց նըկարագրին մէջ գարտուղի կէտ մը, հակառակ իրենց ստրկամտութեան, քմնող ծառայականութեան եւ երկչոտութեան, այն ալ յամառօրէն իրենց պապենական հաւատքին կառուցն է : Շնորհէ հայու մը իր կեանքը, զղջալու եւ իրաւութիւնը ընդունելու պայմանով : Ան լաւագոյն կը սկսէ մեռնիլ, եւ այդ ալ ամենազառն տանջանքներով : Այո, տակաւին յոյս կայ Հայաստանի համար Հիմա, թէ եւ չորցած ոսկորներու հովիտ մէջ, բայց երբ ազատութեան ոգին փչէ իր արիւթիւնը կը վերստանայ եւ հզօր բանակ մը կը կազմէ : «Միջեւ օրս մեր նախահայրերէն ոչ ոք տառապած էր կոտորածներով եւ տանջանքներով : Ընդհակառակ մեր կեանքերը ապահով էին : Մենք ոսկեհանք մը էինք մեր բռնակալներուն : մէկ կամ միւս գիշատիչ փաշայի մը որսն էինք, եւ մեր կեանքի ու պատուի արահովութեան համար շատ մը արքայական փրկանքներ յօժարակամ տուած ենք : Մեր հարստութիւնը անպատմելի էր : մեր երկրին զիրքով մեկուսացած ըլլալով նուաճուի փառքերէն, քաղաքագիտական յաղթանակներէն— իշխանութեան բնական զբաղումները—մեր հայրերը իրենց բախլերը դէպի խաղաղութեան ճամբան ուղղած են, մինչդեռ ազգերը իրար կը ըզկտէին : Ան-

ների հիման վրա :

2. Առանց դադարեցնելու նախապէս նշանակված ընտրութիւնները պետական Դումայի համար, հէնց այժմվանից կարելի եղածին չափով, մինչև Դումայի հաւաքումը, Դումայի նիստերին մասնակցելու տալու համար հրաւիրել և բնակչութեան այն դասակարգերին որոնք այսօր բոլորովին զուրկ են ընտրողական իրաւունքներից, որ հետ միասին ընդհանուր ընտրողական սկզբունքի յետագայ զարգացումը թողով նոր հաստատված օրէնսդրական կարգին :

3. Հաստատել իր բնական զարգացմանը, որ ոչ մէկ օրէնք չէ կարող ունենալ նախ քան Դումայի հաւանութիւնը և որ ժողովրդի ընտրվածների իրական մասնակցութիւնը մեր հաստատած իշխանութեանց օրէնսդրական գործողութիւնների մէջ ապահովված լինի :

Հրաւիրում ենք Ռուսիոյ բոլոր հաւատարիմ զաւակներին յիշել իրենց գէպի հայրենիքը ունեցած պարտականութեանը օգնելու համար վերջ տալու այս չըլված խռովութեանց և մեզ հետ միասին լարել բոլոր ուժերը հարազատ երկրի անգործութիւնը և խաղաղութիւնը վերականգնելու համար :

Տրված է Պետերբուրգում հոկտեմբեր 17, օրը Քրիստոսի ծննդեան 1905 թ. մարտի և Մեր թագաւորութեան տասն և մէկ երրորդ տարուէ :

Նիկոլայ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷ

ՊՈՍՏՈՆ, 18 Հոկտ. 1905

Յարգելի Վարդօ,

Արգէն-կ'սպասէինք որ անկեղծ և կարող մէկը հրապարակ նետուի, աս այստեղ թիւնները մաքրելու միջոցները խորհի և պարզէ անկեղծ և անձնուէր դաշնակցականներու, որոնցմէ շատերը անտեղեակ են անց ու դարձին, ուրախութեամբ կուգամ ըսելու որ դուք եղաք առաջինը և վստահ եմ թէ դեռ պիտի շարունակէք ձեր մաքառումը անարդարներու դէմ, Հոգ չէ թէ աթոռամուկներ և կարգ մըն ալ մոլեռանդ ընկերներ քեզի կը հայտնեն և շոյն իսկ կ'սպասուան կեանքիդ վերջ գնել, Թո՛ղ ատ յիմարները գիտնան թէ քեզի պէս ճշմարտախօս կարող ընկեր մը, ունի շատ մը համակիրներ որ գիտեն վրէժ լուծել (հակառակ պարագային) : Կը խնդրենք որ ամեն բան պարզես և ճշմարտութիւնը երեւան հանես ի շահ Հայ Յեղ. Դաշնակցութեան : Անհրաժեշտ է որ Դաշնակցութեան Ընդհ. Պատգ. ժողովին ներկայ գտնուիս և մինչեւ վերջը անկեղծօրէն կեղծիքները պարզես : Տարիներով աշխատեցանք, կուռեցանք զոհները թէ նիւթապէս և թէ բարոյապէս ի շահ Հ. Յ. Դաշ. իսկ այսօր մեզի անհակացող և հակադաշնակցական կը պոռան. մե՛ք ենք իսկական և հարազատ Դաշնակցականները :

չարչարանքները : Յօժարակամ կը նետուէի այդ կողմին մէջ զիրենք պաշտպանելու համար. բայց, արհեստ, ի՞նչ կ'ընար ընել մէկ անձ մը՝ լըքուած ազգի մը հետ, անգէն, անմարդ, արիւթեան նշոյլն զուրկ :

«Հանդարտ մնացի. երիտասարդ կ'ինս,—փոթորիկէն չորս տարի առաջ իմ իշխանական առնս ըբրած չքնաղ հարսս կը խաղաղեցնէի. կը վստահեցնէի թէ՛ ինքը և իր երկու հրեշտակ զաւակները ապահով էին. թէ ոսկի ունէի—ամենէն անյազն ալ յագեցնելէ աւելի : Ու է յանկարծական զէպքերու համար թրջական ոսկիներով լեցուն պարկեր պատրաստ պահած էի :

«Ախոս՛ս, աւա՛ղ... Սիրեցեալս երեք շաբաթ առաջ Դէֆիիս ծնունդ տուած էր : Ուրիշ պարագաներու մէջ ուրախութեան բաժակս պիտի արտահոսէր, երբ... ո՛հ, Աստուած իմ, ոյժ տուր ինձ այս զրջի առնելու—երբ թուրք զինուորներու և վայրագ քրեարարութեան խմբակ մը խոշոր զուռը կտորելով՝ մոլեգնօրէն սրահէն ներս խուժեց : Սարսափահար ծառաներս փախան, Ե՛ս զէմերնին ելայ,— Պ՛ւր է պատգարակդ խոզ քրիստոնեայ, Ու տանը չորս կողը ցրուեցան : Միեւնոյն ժամանակ արեւար. բուններու խմբակ մը յանկարծակի բռնելով զիս՝ չուաններով աթոռի մը կապեցին ; Հիմա բերէ՛ք ձւացողները՝ պոռացին, Բոպէ մըն ալ, և ահա՛ եր-

որ մեր կուսակցութեան բարձրացման կաշիատինք և անկեղծ քննադատութիւնները կը սիրենք :

Մեր զեկավարող բիւրօները՝ մեր իրենց վրայ ունեցած վստահութիւնը շարաշար գործածեցին : Պէտք է և ժամանակը հասած է որ արտաքսուի՛ն Հայաստան և հայու ցուր չը գիտցող զեկավարներ՝ րը Դաշնակցութիւնը տուած է հերոսներ և անխոնջ կուռույններ, ուրեմն չը պէ՛տք է մենք անօգնական թողունք անոնք : Բացէ ի բաց անունները հրապարակ հանելու ես բոլոր կեղծաւորներուն :

Տե՛ղիւր

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐՉԱՊԷՍ

Վերջապէս վերջին «Հայրենիք»-ում, մեր նշտարը փոքրիկ խմբագրական ծանօթութեամբ վերաւանդի կողը խոթելուց յետոյ, կարգում ենք մի անստորագիր յօդուած Վարդօյի և Դաշնակցութեան վարիչ մարմիններէ ի միջև ծագած խնդրի մասին :

Դաշնակցութեան վարիչների տխրահուշակ Ջամբապը, (վերաւանդ) երկարամտեայ արհամարոտ!!! լուծութիւնից յետոյ—հասկանում ենք թէ Վաւան լուծ էր ոչ թէ արհամարելու պատճառով այլ վախենում իր կերպարանքը մէջ տեղ դրվելուց և առասպելներ էր հիւսում—(վայ օյի՛նքաղ Վաւան) տաս-

նամեայ ձրիակեր սատրապի հոգեբանութեամբ բացատրութիւններ է տալիս Վարդօյի բռնած ընթացքին խոստանալով շարունակել : Մեծապէս գոհ ենք, որ այդքան էլ արհամարելի չենք եղել որ վերջապէս թէ առաջին և թէ երկրորդական օրգաններ պարտաւորվում են խօսելու...

Թէ Վաւանին ինչ տեսակ տիպ է մեր յեղափոխութեան մէջ, այդ ընդհանրապէս շատ շատերին յայտնի է : Ամենքն էլ գիտեն որ Վաւանից վարնոց ջամբազ հակայական ստախօս տիպ հայութեան մէջ գրեթէ գոյութիւն չունի : Չը նայելով այդ վարնոցութեան այնուամենայնիւ մենք արհամարոտ լուծութիւն չենք պահ պանի գէպի այդ խոշոր, յեղափոխութեան մէջ առաջնակարգ վարիչուտ, իր և իւրայինների հաշիւները լաւ գիտցող և պահպանող տիպը, որովհետեւ դա, շնորհիւ Դաշնակցութեան վարիչներին, այսօր ներկայանում է մի հին պարսկական սատրապ... Ամերիկայի հայ գաղթավայրերում, Առայժմ մենք կըսպասենք մինչեւ յօգու ծների շարքը վերջանայ, որպէս զի պատասխանենք ըստ կարգին Մելիքսեղէքի և դօժիւմաններով, ինչպէս մեր սովորութիւնն է, իսկ հիմա կարճ ծանօթութիւն կը տանք այդ խեղճի նկարագրի մասին որպէս զի հայ յեղափոխական սկզբունքներով զեկավարվող և յեղափոխական բարոյականութեան վրա գաղափար ունեցող մարդիկ հասկա-

նանց առեւտրական ձեռնարկները ամէն երկրի հետ էր եւ անոնց նաեւրը ամեն ծովու վրայ, աշխարհի վաճառական իշխաններն էին անոնք : Սակայն մէկ կողմ թողունք այդ : Դէֆիս երէ պարէր, աշխարհի էն հարուստ ժողովուրդին պիտի ըլլար Այս նախադասութիւնս կը զարմացնէ զեզ. բայց երբ կարգաս, պիտի հասկնաս թէ ինչու աղքատի զեր ստանձնած եմ : Մինչդեռ ոսկիի շեղծերը, զոհարի լեռներ լոկ աւուկներ են, որոնք ոտքովս կը խառնչեմ, այլ, արհոս՛ս, որ ժամուան մը իսկ երջանկութիւնը չեն կրնար շնորհել :

Դաշնակցութիւնէն, խստուամենբէն և երս շխառուումներէն յետոյ որոնց մասին խոսեցայ, կոտորածներ և հալածանքներ, որոնք տարիներէ ի վեր քրօնիական դարձած էին Հայաստանի համար, տասնապատիկ կատաղութեամբ մը վերսկսան կարծես թէ երկրային դեւերը՝ միանալով զոթիսքի դեւելուն հետ, մեր դժբախտ երկիրը հուրի և սուրի հանգիստավայր մը դարձնել կուգէին : Հիմա տարակոյս չունինք, որ ընդհանուր կոտորածները, տանջանքները և հրկիզումները, որոնք տասնեօթ տարի առաջ սկսան՝ նախապատրաստուած ծրագրիներ էին.—այն հալածանքներուն նախնականքը, զորս Սուլթանն ու իր արքանականները հայ քրիստոնեաներու համար որոշած էին : Ողբացի՛ հայրենակիցներուս անխմանալի

կու դիւահարներ ներս մտան, իւրաքանչիւրը հրեշտակներէս մէկը ձեռին : Աչքերուս առջեւ ոտքերնէն կախեցին զանոնք : «Ո՛հ, խնայեցէ՛ք զաւակներուս, խնդրեցի, պաշտեցայ, ոսկի ունիմ... շատ ընտիր ոսկիներ... հազարաւորներ : Մինչեւ կեանքերնուդ վերջը բաւող հարս պուրիւն կուռնենք Ո՛հ խնայեցէ՛ք զաւակներուս :

«Մաղրեցին, խնդացին «Այ» խաղը աւելի լաւ է» կը գոչէին, առանց ժամանակ կորսնցնելու : Դժոխային գործը անմիջապէս սկսաւ : Միս մանրելու փայտ մը զրին առջեւս ու կրտրեսագոյնը զրին վրան—մինչդեռ միւսը կը նայէր : Վայրենի կըքրիչներով կտորեցին փոքրիկ ականջները... մանրիկ ձեռքերը... պզտիկ ոտքերը... մարմին իւրաքանչիւր տաք ու զողզողուն պատառները մէկ կողմէն իմ գիրկս նետելով : Աչքերս գոցեցի, նիզակի ծայրով ստիպեցին զիս բանալ զանոնք : Անոնք... բայց... բայց չեմ կրնար յառաջ երթայ : Աստուած մը կա՞յ արդեօք երկնքի մէջ, ճշարտի... կա՞յ քրիստոնեայ ազգութիւն մը աշխարհի վրայ : Եթէ կայ, ճշմարտ է որ պիտի ընդունիք ձեր վարձատրութիւնը, Սրբանման կեղծաւորութեամբ, մէկ կողմ կանգնած, կը թողուք որ յօշոտեն... իր փոքրիկները :

«Չաւակներս խաղալ են հիմա—իրենց շարչարանքը վերջացած էր.—

սակայն աւելի դառն օրհաս մը կը սպասէր ինձ,—վասնզի, ահա՛ լիտի քրքիչներով ու խնդուամենքով, հոգեակս... գեղուհիս... կ'ինս ներս կը բերեն, ու իր տղոց նման աչքերուս առջեւ կը կախեն : Այդ գերագոյն րոպէին իսկ տեսայ որ հրեշտակս անդգայ էր, ու մահացուցիչ ձայնով մը գոչեցի.—«Ո՛հ, Աստուած իմ, զթա՛ս, ո՛, գթա՛... Քրիստոսի սիրոյն համար քու քովդ առ զէնի՛ս Ապա հեգնութեանց եւ քրքիչներու մէջէն հզօր ձայն մը լսեցի, բնականաբար հրամանատարիւնը.—«Մուհամէտի մօրուքովը կերպուում, որ խոզը կաղօթէ կոր իր սատանային» : Ականջ չը դրի իրեն : «Մուհամէտի մօրուքովը կերպուում, որ պիտի շնորհեմ իրեն—խոզին—աղօթք կ'ինր յիրաւի համեղ պատաս մէ՛ք որպէս հուրի ճաւաղաքի առաջնորդին» համար. բայց, բժ՛ւհ, էգ խոզը արգէն մեռեր է, և մեռած կ'ինը ո՛չ աստուածներուն պէտք է և ո՛չ ալ մարդոց : Ահա՛, հիմա քեզի պիտի նուիրեմ զինքը», ու երկար նիզակը սիրեցեալիս գողգողուն մարմինն մէջ խրելով ճերմակազգեստ մարմինը ինձ երկնցուց : «Ահա՛, ա՛ռ խոզը» կը գոչէր :

(Շարունակելի)

նան թէ իրենց գիմացը գտնը-
վող Վառձեանքին է...

Վառձեան ամբողջ տաս տարի,
փառաւոր ձրիակերութիւն է ա-
րել արտասահմանում աւելի մեծ
ոտնիկով և թեթեւ ու պատուա-
բեր աշխատութեամբ քան Պոլ-
սոյ մէջ կարող էր իր շնչին ու-
ճիկով և փոստային շնչին պաշ-
տօնով... Եւ Պոլսում զուգահեռա-
բար թէ Արփիարի բարեկամն է
եղել և թէ նրան իբրեւ դաւա-
ճան ճանաչող և մահուան որոշում
տուող, ու յետոյ վերջինի վի-
րաւորած օրերում միւթա-
րիչ բարեկամի դերում այցելու-
թիւն տուող...

Չեզոք Միւթարի մահուան ո-
րոշում տուողներէ մէկն էլ այդ
պարոնն է որ վերջը նրա հետ
միացաւ միութեան օյինքազու-
թեան մէջ... և քիչ մնաց Դաշ-
նակցութիւնը ահագին փորձանք
ների մէջ գնէր:

Նոյն այդ պարոնն էր որ ոգի ի
բռնի, Արփիարի դէմ տէնօրը
կատարել տալուց յետոյ, իբրեւ
անվախ յեղափոխական (սի.բ.)
հակառակում էր այդ որոշումը
հրատարակել Դաշնակցութեան
օրգանում:

Այդ պարոնը որ մինչեւ 96ը
թուականը Պոլսում իր ստեղծած
միապետական գրութեամբ, մա-
նուանդ Վահանանի մեկնելուց
յետոյ, Դաշնակցութեան գործերի
կապով կտրուցն էր և մինչեւ օրս
ոչ մի մանրամասն հաշիւ չէ
տուել Պոլսոյ այդ հարուստ ժա-
մանակաշրջանի գրամական վի-
ճակի եւեմտաքի մասին:

Նոյն այդ պարոնն էր որ Պոլսից
Բուլղարիա գալով—յեղափոխա-
կան կասսայից առանց այլևայ-
լու թօան իր մօրը և քրոջը ամ-
սական էր կապելու մի անգամբը
Վարդօն ստեղծված գրութիւնը
գտնելուց յետոյ մի քիչ գրա-
մը ուշացրել էր քրոջից
մի յանդիմանական նա-
մակ ընդունեց գրամները ու-
շանալու մասին և իրենից ներօ-
ղութեան նամակ...:

Եւ այս տեսակ մի մարդ, յան-
կարծ մէջտեղ է գալիս և Վար-
դօյին ուզում է մեղադրել յեղա-
փոխական բարոյական ոճրագոր-
ծութեան մէջ որովհետեւ Վար-
դօն չէ ուզում այդ հացկատակ-
ների շահագործութիւններին
հանգուրժել և գրամները ու-
տեցնել տալ Վարդօն՝ դեռ Դաշ-
նակցութեան գրոջը գոյութիւն
չունեցած որոշ սղգեցութեամբ,
գիրքով յեղափոխական էր...
այդ յայտնի է ամբողջ հայ ժո-
ղովրդին և բոլոր ներկայումս գո-
յութիւն ունեցող յեղափոխական
կուսակցութիւններին... և իր
գիրքը աւելի փայլուն դարձնե-
լու համար գաշնակցութեան
պէտք չունէր և չունի
էլ և Առայժմ այսչափ, ինչպէս

ասացինք մենք առանց արհամա-
րելու կապանք «Հայրենիք»-ի
յօդածի շարքերի վերջնալուծ
ամեն կէտերին մանրամասնօրէն
պատասխանելու համար:

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԽՈՒՐԹԻՒՆ

Ա. Ն. Բրէս. թերթը հե-
տեւալը կը գրէ.— գիւանագի-
տական բանակցութիւնները ո-
րոնց նպատակն է միջազգային
նաւային ցոյցէ մը խոստովել
Թուրքիոյ հանդէպ դեռ վերջ-
նական արդիւնք մը տուած չեն:
Անգլիոյ Թուրքիոյ հետ յարաբե-
րութիւնները խզելու առաջար-
կին դեռ պատասխանած չեն ի
տալիա և Ֆրանսա, Աւստրիան
արդէն միացած է Անգլիոյ և
Ռուսիոյ համաձայնութեան մը
զինքը պատրաստ յայտարարած
է մասնակցելու այդպիսի հաւա-
քական ձեռնարկի մը: Դեռ ծո-
վային կարգադրութիւններ եղած
չեն բայց այն փաստէն քօն
էտիտի հրամանատարութեան
տակ գտնուող նաւաբաժինը
դեռ Բօլաէն հեռացած չէ կերէի
որան հըսպասէ վերջնական կար-
գադրութեան Արեւելք մեկնելու
համար:

Եթէ միջազգային նաւայոյցի
մը անհրաժեշտութիւնը զգացուի
Սանտա ծովախորշը կամ Տէնէ-
տօս կղզիին մօտերը պիտի ընտ-
րուի նաւաբաժիններու հաւաք-
ման աեղը: Այդ տեղէն ամենը մի
ասին պիտի մեկնին կամ գէպի
Սելանիք և կամ թէ Տարտանէլ:
Աւստրիական Հապսպուրկ աւր-
պատոյ Ս. Գեոյգ զրահ. ւորները
պիտի մասնակցին Սատէլիթ Ա.
վիզօ ու վ միասին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանի հիւանդութիւնը կը
շարունակուի Բարիզի մէջ. զին-
քը խնամող հինգ բժիշկներ կսեն
որ շարաթի մը չափ իր սենեակէն
դուրս չի կրնար ելլալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բոլոր պետութեանց սպառնա-
լիքի ազդեցութեան տակ, բացի
Գերմանիայէն, Բարձրագոյն Դու-
ռը զիջանիլ որոշած կերելի
քօնթրօլի խնդրին մէջ:

Բարձրագոյն Դուռը հոկտեմբեր
20 ին նօթա մը պատրաստեր է
դեսպաններուն տալու համար,
որով քանի մը ձեւական փոփո-
խութիւններ կուզէ մտցնել դես-
պաններուն պահանջներուն մէջ.
որպէսզի Սուլթանի վեհապետա-
կան իրաւունքները չխախտուին:
Այդ փոփոխութիւններու հիման

վրայ բարձր. Դուռը բանակցու-
թիւնները շարունակելու իրա-
ւունքը կը վերապահէ: Կը հա-
ւատացուի որ պետութիւնները
պիտի համաձայնին Թուրքիոյ
պահանջած այդ փոփոխութիւն-
ներուն:

— Պէէչէքընա Բօշթա՞յի թըղ
թակիցը Պօլսէն կը հեռագրէ.—
թէ և դրականապէս ապացուցուե-
ցաւ թէ ոստիկանութիւն գիտ-
մամբ ումբային դաւադրու-
թիւններ կը կազմէ այսինքն
ուումբեր գտնելով այն տեղերը
ուր ինք ոստիկանութիւնը դրած
է. այնուամենայնիւ հայերու
ձերբակալումները և տանջանք-
ները կը շարունակուին. եւրօ-
պական գաղութը չափազանց
վրդովուած է. դեսպանները ան-
գործութեան մէջ են:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն հոկտ. 20 ին
կը հեռագրեն. կայսերական հը-
րամանով երկու սեռի պալատա-
կաններն և պարտը մուտք ու-
նեցող զինուորական և քաղաքա-
յին բոլոր պաշտօնեաները եկե-
ղեցին պիտի գանուին 17 ին ցարի
հրովարտակին պատճառով եղած
մաղթանքին ներկայ ըլլալու հա-
մաղ:

— Բօրէտօնօսցե իր ցանկու-
թեամբ Սինօզի բւօքօրօրի պաշ-
տօնէն հեռացած է. կրթական
նախարար ժէնէրալ Ելազով ևս
հրաժարած է պաշտօնէն:

— Նախարարպետ ընտրուած
է կոմս Ուլթէ:

— Պահապարական լրագիրը
կը յայտարարէ որ ներքին գոր-
ծոց նախարարի արգելքը երկու
մայրաքաղաքների քանի մը
թերթերու հատով ծախելու մա-
սին վերցուած է:

— Հոկտեմբեր 19 Բեթերս-
պուրկէն կը հեռագրեն—կէսօրին
համալսարանի քով զինուորները
սրերով հալածեցին ուսանողնե-
րու խումբ մը՝ ուսանող մը վի-
րաւորուած և մէկ մըն ալ սպան
նուած է:

Գանի մը միթինգներու միջո-
ցին քարոզած են որ պէտք է
զէնք գնել:

— Հոկտեմբեր 19 Մօսկուայէն
կը հեռագրեն. երէկ թատրոնա-
կան հրապարակին վրայ միթինգ
տեղի ունեցաւ. 50,000 հոգիի
մասնակցութեամբ: Ներկաներէն
չատեր կարմիր նշաններ կը կրէ-
ին: Ետտ տեղեր ընդհարումներ
տեղի ունեցան. կան սպան-
նուածներ և վիրաւորուածներ:
Ամբոխը 200 քաղաքական բան-
տարկեալ ազատեց բանտէն:

— Հռչակաւոր անիշխանական
գրագէտ իշխան Գուրօթթիին
որ 83 թուականէն սկսեալ Ռու-
սիայէն արտաքսուած էր արտօ-

նութիւն ստացեր է հայրենիք
վերագուեալ, ինչպէս կը հա-
զորդեն անգլիական թերթերը:

— Ուրիթ մամուլի ներկայա-
ցուցիչներէն 40 հոգի ընդունե-
լով խնդրած է որ աջակցին խա-
զաղութիւնը վերահաստատելու
համար. ներկայացուցիչները
յայտարարած են որ կառավա-
րութիւնը պէտք է անմիջապէս
իր բարենորոգման խոստումնե-
րը կատարէ. ժողովուրդը չի հա-
ւատար, մանաւանդ որ պէտք է
քաղաքական յանցաւորներուն
ընդհանուր ներում տրուի: Ուրիթ
խոստացած է ամեն ջանքի գործ
գնել այդ պահանջներուն շու-
տով բաւարարութիւն տրուի:

— Կը վախցուի թէ պալատի
մէջ յեղափոխութիւն տեղի ունե-
նայ պահպանողական տարրին
չնորհի:

ՖՐԱՆՍԱ

Հուպէ Բարիզ վերագործաւ
Սպանիայէն և ժողովրդին կողմէն
համակրական մեծ ցոյցերու ար-
ժանացաւ:

ԹԱՏՐՈՆ և ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

25 հոկտ. 1905 երեքշաբթի
գիշեր ժամը 6 իշդ 9 ու կէսին
ծանօթ ողբերգու արուեստագէտ
պ. Վ. Կալֆայեան մասնակցու-
թեամբ Տիկ. Պ. Մասուլեանի
և Տ. Տ. Գալէմեանի պիտի ներ-
կայացնէ ի ն պատահայոց
վարժարանի Օթէլլօթի նշա-
նաւոր 4 տեսարանները. հեղ.
Վիլ. Շէքսպիր:

Պուկարիոյ ծանօթ Լօշեր ըն-
տանիքի օրէսգրքը պիտի նուագէ
ընտիր կտորներ:

Լ Ս Ա Ր Ա Ն

Վառնայի երկսեռ հայ հասա-
րակութիւնը կը հրաւիրուի ներ-
կայ գանուիլ լսարանական 4րդ.
ժողովին, որ պիտի գումարուի
յառաջիկայ երկուշաբթի, 24
հոկտ. 1905, ժամը 8 ու կէսին,
երեկոյեան, գարոցի սրահի մէջ:
Պիտի ատենախօսեն քանի մը
երիտասարդներ. Նիւթ— Հայ
մարզական խումբի մը
կարեւորութիւնը և կազ-
մութիւնը:

Վարչ. Հայկ. Ընթերցարանի
Վառնա, 20 հոկտ. 1905
(Նիւթ)